

ՆԱՍԴԱՔ ՕԷՄԵՔՍ ԱՐՄԵՆԻԱ ԲԲԸ

Տնօրեն պրն. Ա ՄԵԼԻՔՅԱՆԻՆ

Ներկայացվում է «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲ Ընկերության ընթացիկ հաշվետվությունը ս.թ. հունիսի 1-ին կայացած բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի կապակցությամբ:

Կից՝ ընթացիկ հաշվետվությունը 1օրինակից, ընդամենը 26էջ:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ՝

Գ. ԿԱՖՅԱՆ

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

Ընթացիկ հաշվետվություն

Եռամսյակային ֆինանսական հաշվետվություն

Տարեկան հաշվետվություն

« ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ » բաց բաժնետիրական ընկերություն,
«ԵՈԳ» ԲԲԸ

թողարկողի ֆիրմային անվանումը (անունը, ազգանունը)
Բաց բաժնետիրական ընկերություն

կազմակերպական - իրավական ձևը
ք.Երևան 0023, Արշակունյաց, 12 հեռ. 58-66-18, ֆաքս 52-57-13

գտնվելու վայրը, հասցեն, կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, էլ-փոստ և այլն)
N 5 06.07.2010թ.

հաշվետվության համարն ու ամսաթիվը

տեղաբաշխված արժեթղթերի դասը` սովորական

արժեթղթերի քանակը` 10.348.896 հատ

արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)` 1000

«Մենք` ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել հաշվետվության ամբողջականությունը»:

ստորագրող անձինք`

Ազատուհի Մակարյան

գլխ. հաշվապահ

06.07.2010թ.

(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում են (ստորագրությունները վավերացվում են տնօրենների խորհրդի նախագահի կամ գործադիր տնօրենի կամ նման իրավասություն ունեցող այլ անձի կողմից)

Գազիկ Կաֆյան

գլխավոր տնօրեն

06.07.2010թ.

(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
-------------------	----------	------------------	-----------

« Ե Ր Ե Վ Ա Ն Ի Ո Ս Կ Ե Ր Չ Ա Կ Ա Ն Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ն » Բ Բ Ը

Ընթացիկ հաշվետվություն

2010թ. տարեկան ժողով

Հասցե **ք. Երևան 023, Արշակունյաց փ. 12**

Հեռախոս **52-53-21,58-66-18**

Ֆաքս **52-57-13**

Էլփոստ **Info@yerjewel.com**

Ինտերնետ կայք **www.yerjewel.com**

Սույն թվականի հուլիսի 1 -ին տեղի ունեցավ «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲ Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը:

Ներկայացվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կազմակերպման և վարման ժամանակ առաջացած հետևյալ փաստաթղթերը.

1. Ընկերության տնօրենների խորհրդի 17.06.2010թ. կայացած նիստի արձանագրությունը (N 3Խ-10):

2. Տարեկան ընդհանուր ժողովի արձանագրությունը (N 2Ժ -10, 01.07.10թ.):

3. Հաշվիչ հանձնաժողովի N 1, N 2 և N 3 արձանագրությունները:

4. Գլխավոր տնօրենի Ընկերության 2009թ. գործնական վերաբերյալ հաշվետվությունը:

5. 2009թ.-ի գործնական ֆինանսական վերլուծությունը:

6. Վերստուգիչ հանձնաժողովի եզրակացությունը:

8. Բաժնետերերին բաժանված հետևյալ նյութերը.

- ժողովի օրակարգը;
- Ընկերության 2009թ. տարեկան հաշվետվություն;
- Տնօրենների խորհրդի անդամության առաջարկվող թեկնածուների ցուցակը;
- Քվեաթերթիկի օրինակը:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3Խ-10

«Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ տնօրենների խորհրդի նիստի
ք. Երևան 17.06. 2010թ.

Ներկա են տնօրենների խորհրդի հետևյալ անդամները՝

Նախագահ՝ Ներսես Երիցյան - ՀՀ Էկոնոմիկայի Նախարար
անդամներ՝ Էմիլ Գրիգորյան - ԵՈԳ -1 « Գնոմոն » ԲԲԸ Գլխավոր Տնօրեն
Գագիկ Աղաջանյան -ԲՏԱ Բանկի ռիսկերի ծառայության պետ
Սեյրան Սուվարյան – Երևանի պետական համալսարան
Գարիկ Հովհաննիսյան - « ԵՈԳ » ԲԲԸ արտադրության տնօրեն

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը պետք է կայանա ս/թ հուլիսի 1- ին:
Այս կապակցությամբ որոշեցին՝

1. Ընկերության 2009թ. գործունեության տարեկան ընդհանուր ժողովը հրավիրել
2010թվականի հուլիսի 1-ին, ժամը 15.00, ընկերության դահլիճում:
2. Հաստատել «ԵՈԳ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի հետևյալ
օրակարգը՝

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Ընկերության 2009թվականի գործունեության տարեկան հաշվետվության
հաստատում:
2. Ընկերության 2009թվականի ֆինանսական գործունեությունը ամփոփոխ
տարեկան հաշվետվության հաստատում:
3. Ընկերության շահույթի և վնասի հաշվետվության հաստատում:
4. Ընկերության վերստուգողի հաստատում:
5. Ընկերության վերստուգողի 2009թ. հաշվետվության հաստատում:
6. Տնօրենների խորհրդի անդամների ընտրություն:

Նախագահ՝ Ներսես Երիցյան
անդամներ՝ Էմիլ Գրիգորյան
Գագիկ Աղաջանյան
Սեյրան Սուվարյան
Գարիկ Հովհաննիսյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 2Ժ -10

«Երևանի ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական
Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի,
կայացած 2010թ. հուլիսի 1 -ին, ժամը 15.00

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ` Ընկերության 10 348 896 տեղաբաշխված բաժնետոմսերի
սեփականատերերից թվով 8.307.241 բաժնետոմսերի սեփականատերեր
կամ նրանց լիազոր ներկայացուցիչներ
(80,27%)

Բաց քվեարկությամբ ժողովի նախագահ ընտրվեց տնօրենների խորհրդի
անդամ Էմիլ Գրիգորյանը, քարտուղար ընտրվեց Օ. Ամիրյանը (միաձայն):

Միաձայն ընտրվեց նաև հաշվիչ հանձնաժողովը, բաղկացած երեք հոգուց`
ժամհարյան Արմինե, Յովսեփյան Խանում, Մկրտչյան Մարինե:
Ժողովին ներկայացվեց հետևյալ օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ`

1. Ընկերության 2009թվականի գործունեության տարեկան հաշվետվության
հաստատում:
2. Ընկերության 2009թվականի ֆինանսական գործունեությունը ամփոփոխ
տարեկան հաշվետվության հաստատում:
3. Ընկերության շահույթի և վնասի հաշվետվության հաստատում:
4. Ընկերության վերստուգողի հաստատում:
5. Ընկերության վերստուգողի 2009թ. հաշվետվության հաստատում:
6. Տնօրենների խորհրդի անդամների ընտրություն:

Բաց քվեարկությամբ ժողովի օրակարգը հաստատվեց միաձայն:
Ընկերության 2010թ. գործունեության տարեկան հաշվետվությունը բաժնետերերի
ուշադրությանը ներկայացրեց Ընկերության գլխավոր տնօրեն Գ. ԿԱՖՅԱՆԸ:

Իր ելույթում նա ներկայացրեց 2009թ. Ընկերության գործունեության համառոտ նկարագիրը՝ նշելով այն տենդենցները, որոնք իրենց բացասական ազդեցությունն ունեցան Ընկերության գործունեության արդյունքների վրա: Որպես Ընկերության զարգացումն ապահովող ուղղություններ նշվեցին հետևյալները.

- 2010-2011թթ. հասնել տեսականու աճի՝ մինչև 65 տեսակ իրի, ըստ շուկաների,
- 15 նոր մեդալների կոնստրուկտորա-տեխնոլոգիական մշակում և ներդրում,
- 5տեսակի ժամացույցների մոդելների մշակում և ներդրում,
- Էլեկտրոնոգիոն հարգադրոշմների արտադրության իրականացում,
- արտադրության դիվերսիֆիկացիա, մասնավորապես ոչ թանկարժեք մետաղներից արքեսուարների արտադրություն:

(Հաշվետվությունը կցվում է):

Ձեկուցողը սպառիչ պատասխաններ տվեց բաժնետերերի կողմից բարձրացված բոլոր հարցերին:

Հաշվետվությունը դրվեց քվեարկության, որի արդյունքներն են՝

կողմ՝ - 8.307.241 դեմ՝ - 0 ձեռնպահ՝ - 0

Օրակարգի երկրորդ և երրորդ հարցերի վերաբերյալ զեկուցեց Ընկերության գլխավոր հաշվապահ Ա. Մակարյանը: Նա նշեց, որ Ընկերության հաշվապահական հաշվեկշռի աուդիտը կատարել է «ԳՐԱՆԴ ՏՈՐՈՆՏՈ ԱՄԻՈ» աուդիտորական ընկերությունը: Ա. Մակարյանը ներկայացրեց Ընկերության 2009թ. ֆինանսական գործունեությունն ամփոփող տարեկան հաշվետվությունը և Ընկերության 2009թ. շահույթի և վնասի հաշվետվությունը:

2009թ. ֆինանսական գործունեությունն ամփոփող տարեկան հաշվետվությունը դրվեց քվեարկության, որի արդյունքներն են.

կողմ՝ - 8.307.241 դեմ՝ - 0 ձեռնպահ՝ - 0

Ընկերության 2009թ. շահույթի և վնասի հաշվետվությունը դրվեց քվեարկության, որի արդյունքներն են.

կողմ` - 8.307.241 դեմ` - 0 ձեռնպահ` - 0

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ Գ.Կաֆյանը ներկայացրեց Հ. Հակոբյանի թեկնածությունը վերստուգողի պաշտոնում նշանակելու հարցը, հիմք ընդունելով 2010թվականի հունիսին 8- ին կայացած նրցույթում հաղթող ճանաչված մասնակիցների վերաբերյալ նրցութային հանձնաժողովի «նրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին» N 2 որոշումը և ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանի առ 17.06.2010թվականի N 01/ 21.1/ 2782-10 գրությունը:

Հարցը դրվեց քվեարկության, որի արդյունքներն են.

կողմ` - 8.307.241 դեմ` - 0 ձեռնպահ` - 0

Օրակարգի 5-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց վերստուգող Հ. Հակոբյանը: Նա նշեց, որ հաշվապահական և ֆինանսական հաշվետվությունները գնահատվում են բավարար: Հ. Հակոբյանը ժողովի հաստատմանը ներկայացրեց նաև «Ե Ո Գ» ԲԲԸ Վերսրուգողի գործունեության կանոնակարգը:

Հաշվետվությունը և «Ե Ո Գ» ԲԲԸ Վերսրուգողի գործունեության կանոնակարգի հաստատման հարցը դրվեց քվեարկության, որի արդյունքներն են.

կողմ` - 8.307.241 դեմ` - 0 ձեռնպահ` - 0

Օրակարգի 6-րդ հարցի` Ընկերության տնօրենների խորհրդի անդամների ընտրության համար որոշվեց ներկայացնել քվեարկության Ընկերության երկու բաժնետերերի` Էմիլ Գրիգորյանի և Էդուար Մաթևոսյանի թեկնածությունները, իսկ Ընկերության պետական բաժնեմասի (80%) երեք ներկայացուցիչներ` **Ներսես Երիցյան - ՀՀ էկոնոմիկայի նախարար, Գագիկ Աղաջանյան -ԲՏԱ Բանկի ռիսկերի ծառայության պետ և Սեյրան Սուվարյան – Երևանի պետական համալսարան :**

Տնօրենների խորհրդի անվանական կազմը քննարկումներից հետո դրվեց գումարային քվեարկության և ստացավ հետևյալ քանակությամբ ձայներ:

Ներսես Երիցյան	կողմ` - 8.307.241
Էմիլ Գրիգորյան	կողմ` - 8.307.241
Գագիկ Աղաջանյան	կողմ` - 8.307.241

Սեյրան Սուվարյան կողմ` - 8.307.241

Էդուարդ Մաթևոսյան - կողմ` - 8.307.241

Համաձայն հաշվիչ հանձնաժողովի տվյալների նշված թեկնածուները ընտրվեցին տնօրենների խորհրդի կազմում: Ժողովը հաստատեց հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ

1. Ընկերության 2009թ. գործունեության տարեկան հաշվետվությունը հաստատել:
2. Ընկերության 2009թ. ֆինանսական գործունեությունը ամփոփող տարեկան հաշվետվությունը հաստատել:
3. Ընկերության 2009թ. շահույթի և վնասի հաշվետվությունը հաստատել:
4. Ընկերության վերստուգող հաստատել Հ. Հակոբյանին:
5. Վերստուգող 2009թվականի հաշվետվությունը և «Ե Ո Գ» ԲԲԸ Վերստուգողի գործունեության կանոնակարգը հաստատել:
6. Տնօրենների խորհուրդի անդամներ ընտրել հետևյալ անձինք՝

Ներսես Երիցյան - ՀՀ Էկոնոմիկայի Նախարար

Էմիլ Գրիգորյան - ԵՈԳ -1 « Գնոմոն » ԲԲԸ Գլխավոր Տնօրեն

Գագիկ Աղաջանյան -ԲՏԱ Բանկի ռիսկերի ծառայության պետ

Սեյրան Սուվարյան – Երևանի պետական համալսարան

Էդուարդ Մաթևոսյան - « ԵՈԳ » ԲԲԸ իրանական հարցերով խարհրդ.

Ժողովի օրակարգը սպառվեց, և հայտարարվեց նրա փակումը:

ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ`

ՔԱՐՏՈՒՂԱՐ`

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Օ. ԱՄԻՐՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
« ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ 2009 թվականի
տարեկան գործունեության վերաբերյալ

ք. Երեվան

01.07.2010թ.

2009թ. ներքին և արտաքին դժվարություններով հանդերձ եղել է հակասական և բավականին բարդ աշխատանքի տարի:

Հաշվետու տարում նախորդ 2008 թվականի նկատմամբ գրանցվել է իրացումից հասույթի նվազում՝ 2008 թ. --- 935 324,0 հազ. դրամ

2009 թ. --- 344 648,0 հազ. դրամ:

Համախառն շահույթը կազմել է 2008 թ. ----- 90325,0 հազ. դրամ

2009 թ. ----- 49964,0 հազ. դրամ

2009թ. արդյունքով վնասը կազմել է 42825,0 հազ. դրամ:

Սա այն բացասական արտահայտություններն են, որ ունենք 2009 թ. համար:

Ինչպես 2008 թվականին, այնպես էլ 2009 թվականին մենք գրանցել ենք վճարունակ պահանջարկի կայուն անկում արտաքին շուկաներում, և այդ շուկաների համար մրցակցային պայքարի ծայրահեղ սրում: Պետք է նշել, որ 2009թվականին պահպանվել են ոսկու գնի անկանոն և մեծ ամպլիտուդայով տատանումները, ինչն առավել մեծ դժվարություններ է ստեղծում արտադրանքի սպառման համար:

Ինչպես նախորդ տարում, այնպես էլ այս տարի ներքին շուկայում ստիպված էինք գրանցել ստվերային հատվածի շարունակվող բացասական ազդեցությունը. մեր արտադրանքը մնում էր ոչ մրցունակ գնային առումով:

Այս իրավիճակում մենք շարունակել ենք մեր քաղաքականությունը, այն է՝ ձգտել ենք հնարավորին չափ պահպանել աշխատատեղերը՝ մեր մարքեթլոգների, կոնստրուկտորների, տեխնոլոգների, նկարիչ - դիզայներների, նմուշագործների տարիներով ձևավորված բարձր վարպետությունը և ինտելեկտուալ ներուժը,

ակտիվ պայքար ծավալել ավանդական շուկաներում մեր դիրքերը ամրապնդելու ուղղությամբ:

Միաժամանակ մենք իհարկե ձգտել ենք աշխատել խնայողաբար և կրճատել ծախսերը:

Այսպես . եթե 2008թ. վարչական ծախսերը կազմել են 158 042 ,0հազ. դրամ, ապա 2009թ. կրճատվել են շուրջ 31%-ով և կազմել են 108 859,0հազ. դրամ:

Այս աշխատանքի արդյունքով մենք ունենք որոշ դրական տեղաշարժ՝ այսպես օրինակ 2008 թ. 92043,0 հազ. դրամ վնասի դիմաց 2009 թվականին այն կազմել է 42 825,0հազ. դրամ:

Ինչ խնդիրներ մենք պետք է լուծենք, որպեսզի կարողանանք ապահովել ներկա իրավիճակում ձեռնարկության կայուն և ռիթմիկ աշխատանքը:

Ամենակարևորը - դա ավանդական շուկաների պահպանումն է և նոր շուկաների հայթհայթումը: Սրա հետ կապված կուզենայի ճշել, որ արդիական է մնում նախորդ ժողովում ներկայացված խնդիրը՝ արտադրողները առևտրային ցանցին ոսկերչական իրերը որպես կանոն տրամադրում են վճարման տարկետման իրավունքով, սա առավել ակտուալ է ներկայիս ֆինանսատնտեսական իրավիճակում: Արտադրողներին էլ ոսկին, որպես կանոն, տրամադրվում է կոնսիզցացիոն եղանակով և շուկայական գնից ցածր գնով : Այստեղ մեծ է բանկերի դերը, հաշվի առնելով հեյջինգի / ապահովագրման / մեխանիզմի կիրառումը: Պետք է ձգտենք ներդնել այս մեխանիզմը, ներգրավել մեր բանկերին, իհարկե ՀՀ ԿԲ համակարգող դերակատարությամբ: Այս աշխատածևի կիրառման համար անհրաժեշտ պայման է տեղական ոսկի արդյունահանող ձեռնարկությունների զարգացումը :

Ընկերությունում ներքին աշխատանքում պետք է ապահովենք մարքեթինգի ծառայության կողմից շուկաների մանրակրկիտ ուսումնասիրությունը և վերլուծությունը, հիմնվելով դրա վրա 2010-2011 թվականներին հասնենք տեսականու աճի մինչև 65 տեսակի իրի, ըստ շուկաների, 15 նոր մեղալների կոնստրուկտորա - տեխնոլոգիական մշակում և ներդրում, 5 ժամացույցների մոդելների մշակում և ներդրում , էլեկտրոնոգիոն հարգադրոշմների

արտադրության իրականացում, արտադրության դիվերսիֆիկացիա, մասնավորապես ոչ թանկարժեք մետաղներից աքսեսուարների արտադրություն:

Եվ իհարկե ստեղծված իրավիճակից դուրս գալու համար, շուկայական տնտեսության պայմաններում, պետք է ուժեղացվի Ընկերության ֆինանսական կառավարումը, մշակվի մարքեթինգի քաղաքականության հայեցակարգ, վարվի գնային ճկուն քաղաքականություն, իրականացվի ոսկու կորստի ապահովագրման քաղաքականություն՝ օգտագործելով ֆինանսական անհրաժեշտ գործիքները, մշակվի ծրագիր արտարժույթի փոխարժեքի փոփոխման հետևանքներն ընկերության համար քիչ խոցելի դարձնելու համար, միջոցներ ձեռնարկվի հաստատուն ծախսերը կրճատելու ուղղությամբ, ինչպես նաև պետք է կարողանանք բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, ապահովել ֆինանսական ներդրումների բարձր արդյունավետությունը և աշխատել խնայողաբար:

Գ.Վ.Կաֆյան

ԸՆԿԵՐՈՒՅՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԹՅՈՒՆ

Նկատի ունենալով 2009թ. «Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ տարեկան ֆինանսական հաշվետվությունը, Ձեզ են ներկայացնում ընկերության 2009 թվականի ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ որոշ տվյալներ.

Ընկերության ընդհանուր ակտիվները հաշվետու տարվա վերջի դրությամբ կազմել է

4 641 489,0 հազ.դրամ, այդ թվում ոչ ընթացիկ ակտիվները 850 247,0հազ.դրամ, ընթացիկ ակտիվները՝ 3 719 242,0հազ.դրամ,որոնք կազմում են ընդհանուր ակտիվների համապատասխանաբար 18.32% և 81.68%-ը:

Ընկերության ընդհանուր գնումների գծով կրեդիտորական պարտավորության՝ այն է 875 210.0 հազ. դրամ, 97.81%-ը կազմում է Երևանի Ոսկերչական գործարան-1 «Գնունոն» ԲԲԸ-ին, իսկ Ընկերության նկատմամբ վաճառքների գծով դեբիտորական պարտավորության՝ այն է 2 417 573.0 հազ. դրամ, 96. 1%-ը կազմում է ԵՈԳ-1 «Գնունոն» ԲԲԸ-ին:

2009 թվականի ընթացքում Ընկերության արտադրանքի,ապրանքների և ծառայությունների իրացումից հասույթը կազմել է 344 648.0 հազ.դրամ, նախորդ տարվա 935 324.0 հազ. դրամի դիմաց: 2009թ. Ընկերության իրացման ծախսերը կազմել են 16 097.0 հազ. դրամ, նախորդ տարվա 43 872. հազ. դրամի դիմաց, իսկ վարչակառավարչական ծախսերը կազմել են 108 859.հազ. դրամ, նախորդ տարվա 158 042.0 հազ. դրամի դիմաց: Նախորդ տարվա համեմատ մոտ 2.7 անգամ նվազել է իրացման ծախսերը, իսկ 1.5անգամ՝ վարչական ծախսերը:

2009թ. ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում հաշվետու տարվա վնասը կազմել է 42 825հազ.դրամ.:

Ընկերությունը շահութահարկի գծով առ 01.01.10 թվականի դրությամբ ունի 66 061 հազ. դրամ գերավճար, 2009թ-ի ընթացքում պետբյուջե է փոխանցվել 3 827 հազ. դրամ նվազագույն շահութահարկի գումար: Իսկ ԱԱԴ-ի գծով Ընկերության գերավճարը պետբյուջեին կազմում է 46 913 հազ.դրամ:

Ընկերությունը բյուջեյի,սոցապի նկատմամբ պարտավորությունները կատարում է ժամանակին:

Գլխավոր հաշվապահ

Ա.Մակարյան

Հաշվետվություն
«ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ-ի
Վերստուգողի 2009 թվականի

Ք. ԵՐԵՎԱՆ

« 27 » « հունիսի » 2010թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ-ի 2009 թվականի տարեկան հաշվապահական հաշվեկշռում և ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տեղեկատվության արժանահավատությունը ճշտելու նպատակով Ընկերության Վերստուգողի կողմից իրականացվել է Ընկերության հաշվետվություններում և ֆինանսական փաստաթղթերում բովանդակվող տեղեկությունների հավաստիության ստուգում: Ստուգումը կազմակերպվել և իրականացվել է «Բաժնետիրական ընկերությունների մասին», «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքների, Հայաստանի Հանրապետության օրենսդրական այլ ակտերի, Ընկերության կանոնադրության համապատասխան:

Ստուգումը սկսվել է 2010թ. հունիսի 17-ին և ավարտվել հունիսի 28-ին:

Ստուգմանը պարզվեց.

«Ե Ո Գ» ԲԲԸ ստեղծվել է ՀՀ Կառավարության 2000թ. դեկտեմբերի 31-ի թիվ 907 որոշման, ՀՀ Արդյունաբերության և առևտրի նախարարության 16.01.2001թ. թիվ 9 հրամանի, ինչպես նաև Ընկերության ընդհանուր ժողովի որոշման համաձայն:

Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է՝ Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության օրենսդրական այլ ակտերով և իր կանոնադրությամբ:

Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են՝ պերճանքի առարկաների, ոսկերչական իրերի և թանկարժեք զարդեղենի, ժամացույցների, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, կիսաֆաբրիկատների արտադրություն և վաճառք, նոր տեխնոլոգիաների մշակում, մասնագետների ուսուցման, վերապատրաստման, ցուցահանդեսների և տոնավաճառների կազմակերպում:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 10 348 896 000 դրամ, որը կազմում է 10 348 896 հատ սովորական անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1000 դրամ: Բոլոր 10 348 896 բաժնետոմսերը տեղաբաշխված են բաժնետերերի միջև և լրիվ վճարված են նրանց կողմից, ընդ որում 8 279 117 սովորական անվանական բաժնետոմսեր (80 տոկոսը) համարվում են պետական սեփականություն (տնօրինվում են ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից), իսկ 2 069 779 սովորական անվանական բաժնետոմսեր (20 տոկոսը) սեփականության իրավունքով պատկանում են մասնակի անհատույց սեփականաշնորհման մասնակիցներին:

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը բաժնետերերի ընդհանուր ժողովն է, ընդհանուր ղեկավարումն իրականացնում է տնօրենների խորհուրդը, իսկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գլխավոր տնօրենը:

Ընկերության կառուցվածքում հաշվապահությունը գործում է որպես առանձին ստորաբաժանում:

2009 թվականին Ընկերությունը գույքի, պարտավորությունների և տնտեսական գործառնությունների հաշվառումը վարում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից 2000թ. դեկտեմբերի 29-ի թիվ 319 հրամանով հաստատված կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանի, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, հաշվապահական հաշվառմանը վերաբերող օրենքների և իրավական ակտերի համաձայն:

Հաշվապահական հաշվառման կազմակերպման համար պատասխանատու է գլխավոր տնօրենը:

Ընկերությունում հաշվապահական հաշվառումն իրականացվում է 1C- Ձեռնարկություն հաշվապահական ծրագրով:

Վերստուգողի կողմից ուսումնասիրվել է ղեկավար մարմինների որոշումների կատարման ընթացքը, ստուգվել են փաստաթղթերի համապատասխանությունը օրենքներին: Արձանագրվել են որոշ թերություններ հաշվապահական հաշվառման և ինքնարժեքի հաշվարկման ձևակերպման մեջ:

Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների արժեքը 01.01.2009թ.-ի դրությամբ կազմել է 288973.0 հազ. դրամ, տարվա ընթացքում հաշվի դեբետային շրջանառությունը կազմել է 8873,0 հազ. դրամ, իսկ կրեդիտային շրջանառությունը կազմել է 0,0 հազ. դրամ:

01.01..2010թ.-ի դրությամբ հիմնական միջոցների արժեքը կազմել է 297846.0 հազ. դրամ, հաշվեկշռային արժեքը՝ 78216.0 հազ. դրամ:

Ժամանակավորապես շահագործումից հանված հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը 01.01.2010թ.-ի դրությամբ կազմել է 479020,0 հազ. դրամ:

Հողամասեր հաշվի մնացորդը ինչպես 01.01.2009թ.-ի դրությամբ, այնպես էլ 01.01.2010թ.-ի դրությամբ կազմել է 157738,0 հազ. դրամ: Այս հաշվի մեջ ներառված է նաև օրենքով սահմանված կարգով անհատույց ստացված հողամասի արժեքը:

Գույքագրման արդյունքներով արձանագրվել է 11,7 հազ. դրամ ոսկու և 10,0 հազ. դրամ արծաթի պակասորդ, որը ձևակերպվել է որպես արտադրության անվերադարձ կորուստ: 01.01.2010 թվականի դրությամբ վերականգնվել է 250.0 հազ. դրամ գումար:

Ընկերության գույքագրման հանձնաժողովի կողմից խախտվել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2000թ. հունիսի 2-ի «կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման կարգը» հաստատելու մասին թիվ 102 հրամանի պահանջները:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Ընկերության հիմնական միջոցների վիճակը, առաջարկում ենք հիմնական միջոցների օգտակար ծառայությունը որոշելիս ղեկավարվել ՀՀՀՀ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտի պահանջներով: Ղեկավարվելով ՀՀՀՀ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտի պահանջներով՝ պետք է կատարել հիմնական միջոցների պարբերական վերազնահատումներ, որպեսզի հիմնական միջոցների արժեքը էականորեն չտարբերվի դրանց իրական արժեքից և հաշվեկշռում ճիշտ արտացոլվի դրանց իրական արժեքը: Վերազնահատումներն իրականացնելիս, անհրաժեշտ է հաշվի առնել, որ երբ հիմնական միջոցների միավորը վերազնահատվում է, ապա հիմնական միջոցների ամբողջ դասը, որին պատկանում է այդ ակտիվը, նույնպես պետք է վերազնահատվի, ընդ որում, հիմնական միջոցների տվյալ դասի միավորները պետք է վերազնահատվեն միաժամանակ:

Ըստ ներկայացված հաշվետվությունների 01.01.2010թ. դրությամբ Ընկերության վաճառքների գծով դեբիտորական պարտքերը կազմել են 2517573,0 հազ. դրամ:

Ընկերության կողմից տրված ընթացիկ կանխավճարներ հաշվի մնացորդը 01.01.2010թ կազմել է 29831,0 հազ. դրամ :

Ընկերությունում հիմնադրամներ, ինչպես նաև անհուսալի դեբիտորական պարտքերի դուրս գրման համար պահուստ չի ստեղծվում:

2009թ.-ին Ընկերությունը գործարքները իրականացրել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ՓԲԸ հետ:

Ընկերության գործարքները հիմնականում վճարվել և ստացվել են բանկային փոխանցմամբ, բացառությամբ առհաշիվ անձանց և ընկերության ֆիրմային խանութների միջոցով իրականացվող գործարքների:

Բանկային հաշիվներով դրամական միջոցների հաշվառման գործընթացը բավարարում է ՀՀ գործող օրենսդրության պահանջներին :

2010թ. հունվարի 1-ի դրությամբ Ընկերության հաշվեկշռում ակտիվներին վերաբերող շնորհներ հաշվի մնացորդը կազմել է 146790.0 հազ.դրամ:
01.01.2009թ. դրությամբ գնումների գծով կրեդիտորական պարտքերը կազմել են 745097,0 հազ.դրամ: 01.01.2010թ. դրությամբ կրեդիտորական պարտքի մնացորդը կազմել է 875210,0 հազ.դրամ:

01.01.2009թ. դրությամբ ստացված կանխավճարների մնացորդը կազմել է 2731,0 հազ.դրամ: 01.01.2010թ. դրությամբ հաշվի մնացորդը կազմել է 1990,0 հազ.դրամ:

Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների իրացումից հասույթը կազմել է 344648,0 հազ.դրամ, գործառնական այլ եկամուտները կազմել են 98746,0 հազ.դրամ:

Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեքը կազմել է 294684,0 հազ.դրամ, այլ գործառնական գործունեությունից՝ 97341,0 հազ.դրամ:
2010 թվականին «Ե Ո Գ» ԲԲԸ-ի վնասը կազմել է 42825,0 հազ. դրամ:

01.01.2010թ. դրությամբ շահութահարկի գծով Ընկերությունն 66061.0 հազ. դրամ գերավճար ունի:

01.01.2010թ. դրությամբ ԱԱՀ-ի գծով Ընկերությունը պետբյուջեի նկատմամբ 46913 հազ.դրամ գերավճար ունի:

01.01.2010թ. դրությամբ եկամտահարկի գծով Ընկերությունը պետբյուջեի նկատմամբ պարտք և պահանջ չունի:

01.01.2010թ. դրությամբ գույքահարկի գծով Ընկերությունը պետբյուջեի նկատմամբ ունեցել է 115,0 հազ. դրամ պարտք:

01.01.2010թ. դրությամբ հողի հարկի գծով Ընկերության պարտքը պետբյուջեի նկատմամբ կազմել է 166.00 հազ. դրամ:

01.01.2010թ. դրությամբ սոցապ.հարկի գծով պարտքի մնացորդը կազմել է 263,0 հազ.դրամ:

Ընկերության հաշվեկշռի կառուցվածքի վերլուծություն:

Ընդհանուր առմամբ հաշվեկշիռը համարվում է անբավարար, իսկ կազմակերպությունն էլ անվճարունակ, երբ՝

ա. Ընթացիկ իրացվելիության գործակից տվյալ ժամանակաշրջանի վերջում փոքր է 2 - ից:

$$Q_1 = \frac{\text{Ընդամենը ընթացիկ ակտիվներ}}{\text{Ընդամենը ընթացիկ պարտավորություններ}} = \frac{3791242}{884039} = 4,29$$

բ. Սեփական միջոցներով ապահովվածության գործակիցը (սեփական ընթացիկ ակտիվների և ընթացիկ ակտիվների հարաբերակցություն) փոքր է 0,1-ից:

$$Q_2 = \frac{\text{Սեփ. կապիտալ} + \text{ոչ ընթ. պարտ-ներ} - \text{ոչ ընթ. ակտիվներ}}{\text{Ընթացիկ ակտիվներ}} = \frac{2907203}{3791242} = 0,77$$

Ավարտելով Ընկերության 2009թվականի տարեկան հաշվետվություններում և ֆինանսական փաստաթղթերում բովանդակվող տեղեկությունների հավաստիության ստուգման աշխատանքները՝ պետք է նշել, որ դեռևս առկա են բացթողումներն ու թերացումները ներքին հսկողության համակարգում և հաշվապահական հաշվառման գործընթացներում:

Այսպիսով՝

1. Ներքին վերահսկողության համակարգ.

ա/ առկա են թերացումներ Ընկերության գործունեության վերաբերյալ բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներով և նախորդ ստուգումներով առաջադրանքների կատարման գործընթացում,

բ/ ակտիվների և պարտավորությունների գույքագրումները /եռամսյակային և տարեկան / կատարվում են գործող կարգի պահանջների խախտումներով:

2. Հաշվապահական հաշվառման գործընթացներ.

ա/ Ընկերության կողմից օգտագործվող համակարգչային ծրագրի թերությունների պատճառով հաշվապահական հաշվառման հաշիվներում առանձին դեպքերում ճիշտ չեն հաշվառվում հաշիվների շրջանառությունները, մնացորդները,

բ/ հաշվապահական հաշվառման քաղաքականության առանձին կետեր ենթակա են վերանայման:

Բացառությամբ ֆինանսական հաշվետվությունների վրա նախորդ մասերում հիշատակված հարցերի ազդեցությունից, ֆինանսական հաշվետվությունները առ 1-ը հունվարի 2010թ.-ի դրությամբ, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների ու դրամական հոսքերի մասին տալիս են իրական պատկերը (կամ բոլոր էական առումներով ճիշտ են ներկայացված)՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների:

Գտնում են, որ ստեղծված իրավիճակից դուրս գալու համար պետք է ուժեղացվի ընկերության ֆինանսական կառավարումը, մշակվի մարքեթինգի քաղաքականության հայեցակարգ, վարվի գնային ճկուն քաղաքականություն, իրականացվի ոսկու կորստի ապահովագրման քաղաքականություն, միջոցներ ձեռնարկվի հաստատուն ծախսերը կրճատելու ուղղությամբ:

Վերստուգող

Յ. Հակոբյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 1

« Երևանի ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական Ընկերության
Բաժնետերերի ընդհանուր տարեկան 01.07.10թ. Ժողովի կողմից
ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի

Ժողովին մասնակցում էին 14 բաժնետերեր կամ նրանց լիազոր
ներկայացուցիչներ, որոնք բաժնետոմսերի ընդհանուր քանակությունից
/ 10 348 896 հատ / հանդիսանում են 8.307.241 բաժնետոմսի սեփականատեր, կամ
Ժողովին ներկա էին 80,27% ձայնի իրավունք ունեցող բաժնետերեր, ինչն
ապահովում է քվորումը:

Հանձնաժողովի անդամներ՝

Խ. Հովսեփյան

Ա. Ժամհարյան

Մ. Մկրտչյան

6. Տնօրենների խորհրդի անդամների ընտրության արդյունքում, որը կատարվել է գումարային (կոմուլյատիվ) ձևով բաժնետերերը իրենց ծայները բաշխել են հետևյալ կերպ՝

1. Ներսես Երիցյան	կողմ`	8.307.241
2. Էմիլ Գրիգորյան	կողմ`	8.307.241
3. Գագիկ Աղաջանյան	կողմ`	8.307.241
4.Սեյրան Սուվարյան	կողմ`	8.307.241
5 Էդուարդ Մաթևոսյան	կողմ`	8.307.241

Ընկերության տնօրենների խորհրդի անդամների հետևյալ թեկնածուները ընտրվել են.

1. Ներսես Երիցյան
2. Էմիլ Գրիգորյան
3. Գագիկ Աղաջանյան
- 4.Սեյրան Սուվարյան
- 5 Էդուարդ Մաթևոսյան

Հանձնաժողովի անդամներ`

Խ. Հովսեփյան
Ա. Ժամհարյան
Մ. Սկրտչյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 3

« Երևանի ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական Ընկերության
Բաժնետերերի ընդհանուր տարեկան 01.07.10թ. Ժողովի կողմից
ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի

Ժողովին մասնակցում էին 14 բաժնետերեր կամ նրանց լիազոր
ներկայացուցիչներ, որոնք բաժնետոմսերի ընդհանուր քանակությունից

/ 10 348 896 հատ / հանդիսանում են 8.307.241 բաժնետոմսի սեփականատեր,
կամ ժողովին ներկա էին 80,27% ձայնի իրավունք ունեցող բաժնետերեր, ինչն
ապահովում է քվորումը:

Նախօրոք բաժանված քվեաթերթիկների հաշվառումը ցույց տվեց, որ
օրակարգի առաջին վեց հարցերը բաժնետերերը հաստատել են հետևյալ կերպ.

1. կետ – կողմ 8.307.241 ձայն
2. կետ – կողմ 8.307.241 ձայն
3. կետ – կողմ 8.307.241 ձայն
4. կետ – կողմ 8.307.241 ձայն
5. կետ – կողմ 8.307.241 ձայն
6. կետ – Քանի որ տնօրենների խորհրդի անդամները ընտրվում են գումարային
/կունուլյատիվ/ ձևով, բաժնետերերն իրենց ձայները բաշխել են հետևյալ կերպ.

Տնօրենների խորհրդի անդամներ`

1. Ներսես Երիցյան	կողմ`	8.307.241
2. Էմիլ Գրիգորյան	կողմ`	8.307.241
3. Գագիկ Աղաջանյան	կողմ`	8.307.241
4. Սեյրան Սուվարյան.....	կողմ`	8.307.241
5 Էդուարդ Մաթևոսյան	կողմ`	8.307.241

Հանձնաժողովի անդամներ`

Խ. Հովսեփյան
Ա. Ժամհարյան
Մ. Սկրտչյան

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է

«Երևանի ոսկերչական գործարան»
բաց բաժնետիրական ընկերության
տնօրենների խորհրդի կողմից
արձանագրության համարը 3Խ-10
17.06.10թ.
տնօրենների խորհրդի նախագահ
Ն. Երիցյան

**«Երևանի ոսկերչական գործարան» բաց բաժնետիրական ընկերության
բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի**

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

01 հունիսի 2010թ.

1. Ընկերության 2009թ. գործունեության տարեկան հաշվետվության հաստատում:
2. Ընկերության 2009թ. ֆինանսական գործունեությունն ամփոփող տարեկան հաշվետվության հաստատում:
3. Ընկերության շահույթի և վնասի հաշվետվության հաստատում:
4. Ընկերության Վերստուգողի հաստատում:
5. Ընկերության Վերստուգողի 2009թ հաշվետվության հաստատում:
6. Ընկերության տնօրենների խորհրդի անդամների ընտրություն:

« Երևանի ոսկերչական գործարան » Բ Բ Ը

N	Անուն, ազգանուն	Ծննդյան թիվը	Քաղ.	Մասնագիտ.	Պաշտոնը	Սով.բաժնետոմս. «ԵՈԳ» ԲԲԸ
Տնօրենների խորհրդի անդամների թեկնածուներ						
1.	Ներսես Երիցյան	1971	ՀՀ	տնտեսագետ	ՀՀ Էկոնոմիկայի նախարար	Չունի
2.	Էմիլ Գրիգորյան	1938	ՀՀ	ճարտարագետ	ԵՈԳ-1 «Գնում» ԲԲԸ Գլխավոր տնօրեն	5894
3.	Էդուարդ Մաթևոսյան	1971	ՀՀ	իրավաբան	ԵՈԳ-1 ԲԲԸ, Իրավաբան	7764
4.	Գագիկ Աղաջանյան	1971	ՀՀ	տնտեսագետ	ԲՏԱ բանկ, ռիսկերի ծառայության պետ	Չունի
5.	Խեյրան Սուվարյան	1960	ՀՀ	տնտեսագետ	Երևանի պետական համալսարան, դոցենտ	Չունի

Ք Վ Ե Ա Թ Ե Ր Թ Ի Կ

«Երևանի ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական Ընկերություն.

----- 01 հուլիսի 2010թ

բաժնետերերի /լիազորված անձի/ անուն, ազգանուն ձայների/բաժնետոմսերի/թիվը

ՀԱՐՑ 1. «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ 2009թ. տարեկան հաշվետվության հաստատում:
 ԿՈՂՄ ԴԵՄ ՁԵՈՆՊԱՀ

ՀԱՐՑ 2. «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ 2009 թ. ֆինանսական գործունեությունը ամփոփող տարեկան հաշվետվության հաստատում:
 ԿՈՂՄ ԴԵՄ ՁԵՈՆՊԱՀ

ՀԱՐՑ 3. «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ շահույթի և վնասի հաշվետվության հաստատում:
 ԿՈՂՄ ԴԵՄ ՁԵՈՆՊԱՀ

ՀԱՐՑ 4. «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ Վերստուգողի հաստատումը:
 ԿՈՂՄ ԴԵՄ ՁԵՈՆՊԱՀ

ՀԱՐՑ 5. «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ Վերահսկողի 2009թվականի հաշվետվության հաստատումը :
 ԿՈՂՄ ԴԵՄ ՁԵՈՆՊԱՀ

ՀԱՐՑ 6. «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ տնօրենների խորհրդի անդամների ընտրություն հետևյալ կազմով.

ԳՈՒՄԱՐԱՅԻՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՁԱՅՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ x 5 =

	ձայն
	ձայն
	ձայն
	ձայն
	ձայն

..... ԲԱԺՆԵՏԻՐՈՋ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա.թ. հունիսի 1 -ին, ժամը 15⁰⁰ «ԵՈԳ» ԲԲԸ (Արշակունյաց 12) տեղի կունենա «Երևանի ոսկերչական գործարան» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը:

- ՕՐԱԿԱՐԳՈՒՄ**
1. Ընկերության 2009թ. գործնության տարեկան հաշվետվության հաստատում:
 2. Ընկերության 2009թ. ֆինանսական գործունեությունը ամփոփող տարեկան հաշվետվության հաստատում:
 3. Ընկերության շահույթի և վնասի հաշվի հաստատում:
 4. Ընկերության Վերստուգողի հաստատում:
 5. Ընկերության Վերստուգողի 2009թ.ի հաշվետվության հաստատում:
 6. Տնօրենների խորհուրդի անդամների ընտրություն:

Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կկազմվի 29.06.2010թ.:

Տնօրենների խորհրդի կողմից առաջադրվող վերստուգողի և Ընկերության տնօրենների խորհրդի անդամների թեկնածուների մասին տեղեկություններ կարող եք ստանալ **ա.թ. հունիսի 29-ից** գործարանի անցատնակում (Արշակունյաց 12):

Այլ տեղեկությունների համար դիմել «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ, հեռ. 52-53-21:

Խորհուրդ

Ընկերության տնօրենների

